ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ, Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, *Ե., «Նորավանք» հրատ., 2009, 112 էջ:*



Վերջին տարիներին հայաստանյան և սփյուռքի գիտական շրջանակներում ակտիվացել են տարբեր դարերում բռնի կրոնափոխված հայության խնդրին վերաբերող քննարկումներն ու հրապարակումները: Այս բոլորի մեջ ցայտուն առանձնանում են բ. գ. թ., դոցենտ Ռուբեն Մելքոնյանի հոդվածներն ու վերլուծությունները, որոնք կատարված են գիտական աշխատանքի համար պահանջված սկզբունքներին հավատարիմ: Վստահորեն կարող ենք ասել, որ Ռ. Մելքոնյանը զգալի դեր ունի բռնի կրոնափոխ հայության խնդիրը հայկական գիտական օրակարգ բերելու հարցում:

Ռ. Մելքոնյանի գիտական ուսումնասիրությունների մի մասն ամբողջացել է 2009 թ. հրատարակված «Իսլամացված հայերի խնդիրների շուրջ» մենագրության շրջանակում, որի մեջ ակնհայտ են գիտական նորույթն ու արդիականությունը: Ուրախությամբ պետք է նշեմ, որ Ռ. Մելքոնյանի «Իսլամացված հայերի խնդիրների շուրջ» գիրքը 2011 թ. հաղթող ճանաչվեց երիտասարդ գիտնականների համար ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Համաշխարհային հայկական կոնգրեսի սահմանած «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթում՝ «Արևելագիտություն» անվանակարգում:

Ռ. Մելքոնյանը, օգտագործելով թուրքերենի իր իմացությունը, թուրքական աղբյուրներից հայերեն է թարգմանել և վերլուծել մի շարք տվյալներ, փաստեր, որոնց մի մասը առ այսօր անհայտ էին մեր գիտական շրջանակներում: Բացի այդ, Մելքոնյանը մի քանի անգամ անձամբ դաշտային-հետազոտական աշխատանքներ է կատարել պատմական Հայաստանի տարբեր բնակավայրերում, հանդիպել կրոնափոխ հայերի սերունդների հետ, ձայնագրել կամ գրի առել հետաքրքիր տվյալներ: Ավելորդ չէ նշել, որ Մելքոնյանի գիրքն առանձնանում է նաև ճանաչվելու առումով. Հայաստանում և արտերկրում (ԱՄՆ, Ֆրանսիա, Սիրիա) այս թեմայով հրատարակված մի շարք հոդվածներում հղումներ են արված գրախոսվող աշխատությանը: Հայոց ցեղասպանության խնդրի համատեքստում ևս այս հարցը կարևոր է, քանի որ, օրինակ, ցեղասպանության տարիներին օսմանյան իշխանությունների կազմակերպած հայ երեխաների բռնի կրոնափոխությունը հստակ տեղավորվում է 1948 թ. ՄԱԿ-ի ընդունած՝ ցեղասպանության կանխարգելման կոնվենցիայի 5-րդ կետի շրջանակում: Մելքոնյանի գրքում ի ցույց է հանվում, որ հենց թուրքական աղբյուրներում ու գրքերում ուղղակիորեն և անուղղակիորեն ընդունվում է այն փաստը, որ ցեղասպանության տարիներին հազարավոր հայ երեխաների պարտադրվել է ընդունել իսլամ:

Կցանկանայի խոսել նաև Ռ. Մելքոնյանի աշխատանքի կիրառական նշանակության մասին. նախ գիրքը տպագրվել է ՀՀ սփյուռքի նախարարության դրամաշնորհով ու պատվերով, և բացի այդ, գրքում առկա մի շարք դրույթներ տեղ են գտել Սփյուռքի նախարարության հայեցակարգում: Ավելորդ չենք համարում նշել, որ ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնում դասավանդվող «Էթնիկական հիմնախնդիրները Թուրքիայում», ինչպես նաև «Թուրքիայի նոր և նորագույն շրջանի պատմություն» առարկաների շրջանակներում այս գիրքը ծառայում է որպես դասագիրք:

ՍԱՖԱՐՅԱՆ Ա. Վ.
Պատմական գիտությունների թեկնածու